

ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 62/9

27 դեկտեմբերի 2013 թ.

Քննարկվեց Ա/Ձ Գևորգ Հունանյանի 20.12.2013 թ-ի բողոք-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 09.12.2013 թ-ի թիվ 2128383 ստուգման ակտի դեմ:

Քննարկման ընթացքում նախ նշվեց, որ Ա/Ձ Գևորգ Հունանյանի 20.12.2013 թ-ի բողոք-գանգատով պահանջ է ներկայացվել նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 09.12.2013 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 244607 որոշումն անվավեր ճանաչելու մասին, սակայն բողոք-գանգատը այդ մասով քննության չի առնվում, քանի որ այն բերվել է <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ: Այդ մասին Ա/Ձ Գևորգ Հունանյանին տեղեկացվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ 26.12.2013 թ-ի թիվ ՎՄ/11-1/16366-13 գրությամբ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ պետի 28.11.2013 թ-ի թիվ 2128383 հանձնարարագրի Ա/Ձ Գևորգ Հունանյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի ՀՏ 09.12.2013 թ-ի թիվ 2128383 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով կիրառվել է <Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված պատասխանատվության միջոցը և լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Գևորգ Հունանյանի ներկայացուցչի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Սույն գործի քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում փաստաթղթեր են ստացվել Ա/Ձ Գևորգ Հունանյանի վերաբերյալ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի <ա> ենթակետի համաձայն. <Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝ ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը>:

Քննարկվող դեպքում հաշվի առնելով, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության մարմնում նյութեր են նախապատրաստվում Ա/Ձ Գևորգ Հունանյանի նկատմամբ քրեական գործի հարուցման հարցը պարզելու նպատակով, հետևապես անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը, մինչև քրեական դատավարության կարգով որոշում կայացնելը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի <ա> ենթակետի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Գևորգ Հունանյանի 20.12.2013 թ-ի բողոք-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ա/Ձ Գևորգ Հունանյանի 20.12.2013 թ-ի բողոք-գանգատի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ